

Հայաստանի Հանրապետության Իրավաբանական
Անձանց Պետական Ռեգիստրի Սպանդարյանի
Տարածքային Բաժնի կողմից՝ 10.01.2002թ.-ին
Գրանցման թիվ՝ 286.160.04439
Վկայական՝ 03Ա 052594

Կորպորատիվ Կառավարման Կենտրոն Հիմնադրամի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

1.	ՆԱԽԱՔԱՆ	2
2.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
3.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ	3
4.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ	5
5.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ	5
6.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ	7
7.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻ, ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	11
8.	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ	12
9.	ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	12

1. ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը հանդիսանում է Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի հիմնադրամի կանոնադրությունը և ընդունվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2001 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված «Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի Հիմնադրամի ստեղծման մասին» պայմանագրով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն:

2.2. Հիմնադրամը հիմնադիրների կամավոր գույքային վճարի հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է: Հիմնադրամը գործում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքին (այսուհետև՝ Օրենք), այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան՝ օրինականության, ինքնակառավարման, իրավահավասարության, կամավորության, դեկլարման կոլեգիալության, թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

2.3. Հիմնադրամի անվանումն է՝

- հայերեն լեզվով՝ Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի Հիմնադրամ (կրճատ՝ ԿԿԿ)
- ռուսերեն լեզվով՝ Фонд Центр Корпоративного Управления (կրճատ՝ ЦКУ)
- անգլերեն լեզվով՝ Corporate Governance Center Foundation (կրճատ՝ CGC)

2.4. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0010, Մովսես Խորենացու փողոց 15, 3-րդ հարկ, գրասենյակ 7/1:

2.5. Հիմնադրամն իրավունք ունի ստեղծել ներկայացուցչություններ և մասնաճյուղեր: Օտարերկրյա պետություններում Հիմնադրամի ներկայացուցչություններն ու մասնաճյուղերը ստեղծվում են գտնվելու վայրի երկրի օրենսդրության համաձայն:

2.6. Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Հիմնադիրները պատասխանատու չեն Հիմնադրամի պարտավորությունների համար, ինչպես նաև Հիմնադրամը պատասխանատու չէ հիմնադիրների պարտավորությունների համար:

2.7. Հիմնադրամը կարող է ունենալ դրոշմակնիք, ձևաթղթեր և այլ տարբերանշաններ: Այն ունի իր անվամբ կլոր կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, ինչպես նաև խորհրդանիշ: Հիմնադրամի խորհրդանիշը երեք իրար հաջորդող հավասարակողմ եռանկյունիներն են՝ կապույտ, սպիտակ և սև գույներով: Խորհրդանիշի պատկերն ունի հետևյալ տեսքը.



2.8. Հիմնադրամն իրավաբանական անձի կարգավիճակ է ստանում պետական գրանցման պահից և գործում է անժամկետ: Հիմնադրամն օգտվում է իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտավորություններ:

- 2.9. ՀՀ օրենսդրությանը համապատասխան Հիմնադրամն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, բանկում կամ բանկերում հաշվարկային և այլ հաշիվներ, իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- 3.1. Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Տարբեր աղբյուրներից, այդ թվում իր տնտեսական գործունեությունից ստացված միջոցները ուղղվում են իր նպատակների իրականացմանը:
- 3.2. Հիմնադրամի նպատակներն են՝
- 3.2.1. Հայաստանում կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման միջոցով սատարել քաղաքացիական հասարակության կայացմանը, կայուն տնտեսական աճի ապահովմանը և կոռուպցիայի դեմ պայքարին,
 - 3.2.2. Նպաստել կորպորատիվ կառավարման, կորպորատիվ իրավունքի և կորպորատիվ ֆինանսների՝ տեսական, գիտահետազոտական և գործնական աշխատանքներին՝ դրանց տեսական ու գործնական կիրառումն ապահովելու միջոցով,
 - 3.2.3. Նպաստել Հայաստանում կորպորատիվ կառավարման քաղաքակիրթ պրակտիկայի ձևավորմանը՝ Հայաստանում կորպորատիվ կառավարման ստեղծված վիճակի մոնիտորինգի իրականացման, Հայաստանում իրականացվող կորպորատիվ կառավարման ծարագրերում մասնակցության ապահովման, տվյալ ոլորտում միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման, կորպորատիվ կառավարման ստանդարտների մշակման և ներդրման, ինչպես նաև Հայաստանում կորպորատիվ կառավարման վիճակը և հիմնախնդիրները ներկայացնող ինտերնետային էջի ստեղծման միջոցով,
 - 3.2.4. Նպաստել Հայաստանյան ընկերությունների ներդրումային գրավչության, կառավարման արդյունավետության և մրցունակության բարձրացմանը՝ կորպորատիվ կառավարման հարցերում փորձագիտական խորհրդատվության տրամադրելու, կորպորատիվ կառավարիչների, քարտուղարների և այլ պատասխանատուների մասնագիտական որակը բարձրացնելու, առևտրային կազմակերպությունների, դրանց մասնակիցների և այլ շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության աջակցության ու կորպորատիվ կառավարման հարցերում հասարակության տեղեկացվածության աստիճանի բարձրացման միջոցով,
 - 3.2.5. Հայաստանի իշխանություններին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին կորպորատիվ կառավարման համակարգի հաջողակ մոդելի և երկարաժամկետ մեթոդաբանական օգնության տրամադրումը՝ կորպորատիվ կառավարման ոլորտը կարգավորող հայաստանյան և արտասահմանյան օրենսդրական դաշտի ուսումնասիրության և ոլորտի զարգացմանն ուղղված առաջարկությունների մշակման ու իրավասու անձանց ու մարմինների հաստատմանը, հավանությանը ներկայացնելու, կորպորատիվ կառավարմանն առնչվող հիմնախնդիրներին նվիրված կոնֆերանսների և սեմինարների կազմակերպման և անցկացման միջոցով,
 - 3.2.6. Աջակցել գիտական և/կամ կրթական կազմակերպություններին ու գիտական աստիճան և/կամ պաշտոն ունեցող ֆիզիկական անձանց՝ կորպորատիվ կառավարման, ֆինանսների, կապիտալի և ընդհանրապես ֆինանսական շուկաների ու դրանցում գործող տեխնոլոգիաների, կառուցակարգերի և միջազգային զարգացումների բնագավառի գիտելիքների տարածման, ուսուցման և լուսաբանման աշխատանքներում (ներառյալ համատեղ կամ միակողմանի դասընթացների, սեմինարների, կոնֆերանսների կազմակերպման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ուսումնական

- պլանների, ծրագրերի մշակման, ներդրման, փորձաքննության, ինչպես նաև նյութական, տեխնիկական օժանդակության ցուցաբերմամբ),
- 3.2.7. Միջազգային համագործակցությունը կառավարիչների պատրաստման հարցում, կորպորատիվ կառավարման, կորպորատիվ ֆինանսների, ինչպես նաև դրանց հետ առնչվող արդիական թեմաներով ժամանակակից ուսուցողական և գիտահետազոտական նյութերի հայթայթման, ստեղծման (պատրաստման), հրատարակչական ծրագրերի իրականացման, միջազգային, տարածաշրջանային կազմակերպություններին անդամակցության և համագործակցության այլ ձևաչափերի կիրառմամբ:
- 3.3. Հիմնադրամն, իր նպատակներին հասնելու համար, կարող է ինքուրույն ծավալել ձեռնարկատիրական (հետայսու՝ նաև տնտեսական) գործունեության հետևյալ տեսակները՝
- 3.3.1. Հետազոտություններ և մշակումներ բնական, տեխնիկական և հումանիտար գիտությունների ու տեխնոլոգիաների բնագավառում,
- 3.3.2. Գիտահետազոտական աշխատանքներ՝ տնտեսագիտության, կառավարման, ֆինանսների, քաղաքականության և իրավագիտության բնագավառում,
- 3.3.3. Ծագումնաբանական (գենետիկական) հետազոտությունների և ինժեներիայի բնագավառի գործունեություն,
- 3.3.4. Խորհրդատվություններ առևտրային գործունեության, կառավարման, կորպորատիվ ֆինանսների, մասնավորեցման, վերակազմակերպման և վերակառուցման, ֆինանսական հաշվետվությունների հավաստիության, գույքային և ոչ գույքային իրավունքների գնահատման, ֆինանսական վերլուծության, հաշվապահական հաշվառման և իրավական հարցերով,
- 3.3.5. Մարկետինգ, շուկայի իրավիճակի հետազոտում և հասարակական կարծիքի բացահայտում,
- 3.3.6. Կազմակերպությունների և հոլդինգային ընկերությունների կառավարում,
- 3.3.7. Ակտիվների կառավարում,
- 3.3.8. Գրքերի, ամսագրերի և թերթերի հրատարակում,
- 3.3.9. Օրենքների և այլ իրավական ակտերի ոչ պաշտոնական հրատարակում,
- 3.3.10. Ծրագրային ապահովման մշակում և խորհրդատվություն այդ բնագավառում,
- 3.3.11. Ուսուցման կենտրոնների, սեմինարների և դասընթացների կազմակերպում:
- 3.4. Տնտեսական գործունեության այն տեսակները, որոնցով զբաղվելը պահանջում է լիցենզիա, Հիմնադրամը կարող է իրականացնել միայն տվյալ լիցենզիայի առկայության դեպքում:
- 3.5. Եթե օրենքով և իրավական ակտերով սահմանված դեպքերում գործունեության որևէ տեսակով զբաղվելը բացառում է գործունեության այլ տեսակներով զբաղվելու հնարավորությունը, ապա Հիմնադրամը՝ ստեղծելով դուստր կամ կախյալ տնտեսական ընկերություն (ընկերություններ), կարող է իրականացնել նաև ձեռնարկատիրական գործունեություն հետևյալ տեսակները.
- 3.5.1. Կենսաթոշակային ոչ պետական ապահովություն,
- 3.5.2. Ոչ պետական ապահովագրություն,
- 3.5.3. Ֆինանսական միջնորդությանը վերաբերող կամ դրա հետ կապված ծառայությունների մատուցում (ներառյալ՝ դրամական միջնորդություն, բանկային, ներդրումային, գրավատնային, ֆակտորինգային, հավատարմագրային և ֆինանսական շուկաների կառավարման գործունեություն, ֆինանսական վարձակալություն (լիզինգ), վարկի տրամադրում և ֆինանսական միջնորդության բնագավառի այլ օժանդակ գործունեություն),
- 3.5.4. Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ և սպառողներին այլ ծառայությունների մատուցում:

- 3.6. Հիմնադրամը՝ 3.5 կետում նշված դեպքում, կմասնակցի ձեռնարկատիրական գործունեություն ծավալող որևէ կազմակերպության կանոնադրական (բաժնետեղակալ) կապիտալում, կամ այդպիսի գործունեություն իրականացնող անձի հետ կհաստատի պայմանագրային հարաբերություններ, որոնք կապահովեն Հիմնադրամի մասնակցության գերակշռությունը և/կամ կառավարման որոշումների կանխորոշվածությունը և/կամ տվյալ անձի տնտեսական գործունեության արդյունքից Հիմնադրամին մասնաբաժին ունենալը (շահույթի բաշխման համաձայնության, նման համաձայնության մասնակցության և/կամ նմանատիպ որևէ այլ պայմանագրի կնքմամբ և/կամ արժեթղթի ձեռք բերմամբ՝ անկախ դրա ձևից):

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

- 4.1. Հիմնադրամի հիմնադիրներն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ՝

Տիգրան Կարապետյանը
Անձնագիր՝ AA 0240450, տրված 07.07.95թ.-ին 001-ի կողմից
Հասցեն՝ ք. Երևան, Լենինգրադյան 8, բն. 34,

Աշոտ Եղիազարյանը
Անձնագիր՝ AA 0512760, տրված 04.10.1995թ.-ին 049-ի կողմից
Հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, միկրոշրջան, շենք 27, բն. 48

- 4.2. Հիմնադրամի հնարավոր շահառուներ են համարվում
- 4.2.1. Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները, այլ պետությունները, ինչպես նաև կորպորատիվ կառավարման համակարգի շրջանակներում՝ ՀՀ և օտարերկրյա իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, որոնց Հիմնադրամը կարող է մատուցել իր կանոնադրական նպատակներից բխող ծառայություններ,
- 4.2.2. կորպորատիվ կառավարման, ֆինանսների, կապիտալի և/կամ ընդհանրապես ֆինանսական շուկաների ու դրանցում գործող տեխնոլոգիաների կառուցակարգերի, միջազգային զարգացումների բնագավառի հետազոտություններ իրականացնող, գիտելիքներ տարածող կամ լուսաբանող գիտական և/կամ կրթական իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունները, գիտական աստիճան և/կամ պաշտոն ունեցող ֆիզիկական անձիք, որոնց օգտին, Հիմնադրամը, կարող է կատարել որոշակի վճարումներ, մատուցել ծառայություններ կամ նրանց փոխանցվել Հիմնադրամի գույքն ամբողջությամբ կամ դրա որոշ մասը:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

- 5.1. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադիրների կողմից փոխանցված 20000 (քսան հազար) ՀՀ դրամը, որը կազմավորվել է յուրաքանչյուր հիմնադրի կողմից 10000 (տասը հազար) ՀՀ դրամ ներդրումների հաշվին:
- 5.2. Հիմնադրամը որպես սեփականություն կարող է ունենալ շարժական և անշարժ ցանկացած գույք, դրամական միջոցներ, գույքային իրավունքներ (ներառյալ՝ արժեթղթեր), ինչպես նաև օրենքով չարգելված այլ գույք:
- 5.3. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր գործունեության առարկային և նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան:
- 5.4. Հիմնադրամի գույքի կազմավորման աղբյուրներն են՝

- 5.4.1. հիմնադիրների և այլ անձանց կամավոր ներդրումները կամ հանգանակությունները,
- 5.4.2. տեղական և օտարերկրյա կազմակերպությունների ֆինանսական և նյութական ներդրումները, նվիրատվությունները կամ հանգանակությունները,
- 5.4.3. տնտեսական գործունեությունից ստացված միջոցները,
- 5.4.4. դրամաշնորհները,
- 5.4.5. ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրները:

- 5.5. Հիմնադրամի հիմնադրի կամ այլ անձանց ներդրումները, նվիրաբերությունները կամ հանգանակությունները կարող են կատարվել ինչպես դրամական, այնպես էլ գույքային տեսքով: Ընդ որում, տրամադրվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է համապատասխան անձի և Հիմնադրամի միջև կնքվող պայմանագրում:

- 5.6. Հիմնադրամի սեփականությունը կարող է օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների, եթե նրանք հանդիսանում են շահառուներ:

- 5.7. Հիմնադրամի ծախսերը լինում են կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսեր և վարչակառավարչական ծախսեր:

- 5.8. Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացմանն համար նախատեսված ծախսերը Հիմնադրամի բյուջեում պետք է արտահայտված լինեն առանձին՝ ըստ նպատակների (ծրագրերի) և օգտագործման եղանակների և (կամ) սուբյեկտների, որոնց միջև բաշխվելու են միջոցները: Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացման համար նախատեսված ծախսերում ներառվում են նաև Հիմնադրամի գույքի պահպանման, ավելացման և վերանորոգման, ինչպես նաև կապի, կոմունալ-կենցաղային, էլեկտրաէներգիայի, շինարարության ծախսերը:

- 5.9. Հիմնադրամի վարչակառավարչական ծախսեր իրենց մեջ ներառում են Հիմնադրամի կառավարման, հիմնադրամի աշխատողների աշխատավարձի, ինչպես նաև հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերը:

- 5.10. Հիմնադրամի գործարքները և բանկային հաշիվներից վճարումները կատարվում են ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի և հիմնավորվում են անհրաժեշտ փաստաթղթերով:

- 5.11. Հիմնադրամը ինքնուրույն է իրականացնում իր կանոնադրական խնդիրները: Հիմնադրամը ինքնուրույն է պլանավորում իր գործունեությունը, մշակում իր զարգացման հեռանկարները և որոշումներ ընդունում իր գործունեության վերաբերյալ:

- 5.12. Հիմնադրամի գործունեության ընթացքում ստացված ամբողջ եկամուտը պետք է օգտագործվի նրա կանոնադրական խնդիրների իրականացման համար:

- 5.13. Հիմնադրամի առաջարկած ծառայություններից ստացված շահույթը կարող է տրամադրվել նրա շահառուներին, այդ թվում՝ հիմնադիրներին:

- 5.14. Հիմնադրամի հարաբերություններն այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ գործունեության բոլոր բնագավառներում իրականացվում են պայմանագրային հիմունքներով: Հիմնադրամն ինքնուրույն է ընտրում իր կողմից կնքվող պայմանագրերի առարկան և պայմանները:

- 5.15. Իր կանոնադրական գործունեությունն իրականացնելիս՝ Հիմնադրամն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ ընդունել ՀՀ գործող օրենսդրությանը չհակասող ցանկացած որոշում:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- 6.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝
- 6.1.1. Հիմնադրամի հոգաբարձուների Խորհուրդը (այսուհետև՝ նաև Խորհուրդ կամ Հոգաբարձուների Խորհուրդ),
 - 6.1.2. Հիմնադրամի Կառավարիչը, եթե գործադիր մարմնի լիազորությունները պատվիրակված են առևտրային կազմակերպությանը կամ Տնօրենը, եթե գործադիր մարմնի գործառույթներն իրականացնում է ֆիզիկական անձը:
- 6.2. Հիմնադրամի խորհրդակացական մարմիններն են Հոգաբարձուների պատվավոր անդամների դիվանը (այսուհետև նաև՝ Պատվավոր դիվան), որը ներառում է Հիմնադրամի պատվավոր անդամներին և Տնօրենին, ինչպես նաև անկախ մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու կամ Հիմնադրամի գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով ստեղծվող և հասարակական հիմունքներով գործող Խորհրդատվական Կոմիտեն:
- 6.3. Հիմնադրամի նպատկներին ու գործունեությանը համապատասխան Հիմնադրամի աշխատանքներին օգնություն ցուցաբերող, ինչպես նաև Հիմնադրամի ծրագրերի իրականացմանը նպաստող անձանց Հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի որոշմամբ շնորհվում է Հիմնադրամի պատվավոր անդամի կոչում: Հիմնադրամի պատվավոր անդամի կոչում շնորհելու միջնորդությունը ներկայացնում է Խորհրդի նախագահը, որը նաև առաջարկություն է ներկայացնում Հոգաբարձուների Խորհրդի պատվավոր անդամին այլ շնորհակալագրեր, պատվոգրեր և այլ իրավունքներ վերապահելու համար: Խորհրդի պատվավոր անդամը խորհրդակցական ծայնի իրավունք ունի: Հոգաբարձուների Խորհրդի պատվավոր անդամները հանդիսանում են Պատվավոր դիվանի անդամներ: Պատվավոր դիվանը անդամների ծայների պարզ մեծամասնությամբ ընդունված որոշմամբ կարող է առաջարկություն ներկայացնել Հոգաբարձուների Խորհրդին՝ Հիմնադրամի աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու, նոր ծրագրեր իրականացնելու, ինչպես նաև Հիմնադրամի կառավարման մարմինների գործունեության վերաբերյալ: Առաջարկությունն ստանալուց հետո երկօրյա ժամկետում Խորհուրդը քննարկում և գրավոր արձագանքում է Պատվավոր դիվանին: Պատվավոր դիվանին վերաբերող այլ իրավասությունները սահմանվում են Խորհրդի որոշմամբ: Պատվավոր դիվանը ստեղծվում է Խորհրդի որոշմամբ, եթե կան Հիմնադրամի մեկից ավելի պատվավոր անդամներ:
- 6.4. Խորհրդատվական Կոմիտեի կազմավորման կարգը, նրա իրավասության հարցերի շրջանակը, եզրակացություններ ներկայացնելու կարգը և այլ հարցերը մանրամասն սահմանվում է Հոգաբարձուների Խորհրդի կողմից հաստատվող՝ Հիմնադրամի համապատասխան ներքին կանոնակարգով:
- 6.5. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և Հիմնադրամի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը Հոգաբարձուների Խորհուրդն է, որը կազմված է երեք անդամից: Խորհրդի առաջին կազմը ձևավորվել է հիմնադիրների որոշմամբ: Խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ: Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են Հոգաբարձուների Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է Հոգաբարձուների Խորհուրդը:

- 6.6. Խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում: Հոգաբարձուների Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝
- 6.6.1. նրա գրավոր դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից.
- 6.6.2. նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Հոգաբարձուների Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով Խորհրդի տվյալ նիստում ընդունված որոշմանը հաջորդող օրվանից.
- 6.6.3. նրա մահվան դեպքում՝ մահվան մասին տեղեկությունը Հիմնադրամին հայտնի դառնալու օրվանը հաջորդող օրվանից:
- 6.7. Խորհրդի նոր անդամի ընտրության համար թեկնածու են առաջադրում հիմնադիրները, իսկ եթե հիմնադիրները գոյություն չունեն, կամ Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից 30 օրվա ընթացքում թեկնածու չեն առաջադրում, ապա այդպիսի առաջարկություն կարող է անել Հոգաբարձուների Խորհրդի անդամներից յուրաքանչյուրը: Հոգաբարձուների Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում հիմնադիրները պետք է պատշաճ ձևով տեղեկացված լինեն: Հոգաբարձուների Խորհրդի նոր անդամն ընտրվում է Խորհրդի կողմից՝ նախկին անդամի լիազորությունների դադարման օրվանից ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում՝ Խորհրդի անդամների ձայների երկու երրորդով: Եթե թեկնածուներից ոչ մեկը չի ստացել ընտրվելու համար ձայների անհրաժեշտ քանակ, ապա առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների միջև անցկացվում է կրկնակի քվեարկություն: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է ձայների առավելագույն քանակ, սակայն ոչ պակաս, քան Խորհրդի անդամների ձայների կեսից ավելին:
- 6.8. Եթե 6.7 կետով սահմանված կարգով թեկնածուներից որեւէ մեկը չի ընտրվում, ապա Հոգաբարձուների Խորհրդի անդամի ընտրությունները համարվում են չկայացած: Ընտրությունները չկայացած համարվելու դեպքում նոր անդամի ընտրության համար թեկնածու են առաջադրում հիմնադիրները՝ ընտրությունը չկայացած համարվելու օրվանից 2 ամսվա ընթացքում, իսկ եթե հիմնադիրները գոյություն չունեն, կամ Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից 45 օրվա ընթացքում թեկնածու չի առաջադրվում, ապա այդպիսի առաջարկություն կարող է անել Խորհրդի անդամներից յուրաքանչյուրը: Այդ դեպքում ընտրություններն անցկացվում են թեկնածու առաջադրելու ժամկետների ավարտից հետո՝ 6 ամսվա ընթացքում, 6.7 և 6.8 կետերով սահմանված կարգով:
- 6.9. Եթե մեկ տարվա ընթացքում 6.8 կետով սահմանված կարգով Խորհրդի կազմը չի համալրվում, ապա Հիմնադրամը ենթակա է լուծարման:
- 6.10. Սույն մասի 6.6 կետով նախատեսված հիմքերով Խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում հիմնադրամի հիմնադիրները կամ հիմնադիրը երեք ամսվա ընթացքում կամ սույն մասով սահմանված կարգով համալրում է Հոգաբարձուների Խորհրդի կազմը կամ դիմում է դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար: Հակառակ դեպքում՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երեք ամիս ժամկետով նշանակում է 3 անդամից կազմված Հոգաբարձուների Խորհուրդ (այսուհետև՝ ժամանակավոր Խորհուրդ), որն իր նշանակման պահից վեց ամսվա ընթացքում ձևավորում է Հոգաբարձուների նոր Խորհուրդ՝ Օրենքով սահմանված կարգով: Նշված ժամկետում Հոգաբարձուների նոր Խորհուրդ ձևավորելու անհնարինության դեպքում ժամանակավոր Խորհուրդը դիմում է դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար:
- 6.11. Խորհրդի իրավասություններն են՝

- 6.11.1. Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը և ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.
- 6.11.2. Հիմնադրամի բյուջեի, դրանում փոփոխությունների, աշխատանքային պլանների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.
- 6.11.3. Հիմնադրամի գույքի տնօրինման (գույքի նպատակային օգտագործման) կարգի հաստատումը.
- 6.11.4. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.
- 6.11.5. Հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի նոր անդամների ընտրությունը եւ հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
- 6.11.6. Հոգաբարձուների Խորհրդի նախագահի և Կառավարչի (Տնօրենի) ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.
- 6.11.7. Հիմնադրամի Խորհրդի պատվավոր անդամի կոչում շնորհելու, պատվավոր անդամին այլ շնորհակալագրեր, պատվոգրեր և այլ իրավունքներ վերապահելու, Պատվավոր դիվանի, ինչպես նաև Խորհրդատվական Կոմիտեի ստեղծման և վերջիններիս իրավասությունների մասին որոշումների ընդունումը.
- 6.11.8. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.
- 6.11.9. տնտեսական ընկերություն ստեղծելու կամ դրանում մասնակցություն ձեռք բերելու մասին որոշման ընդունումը.
- 6.11.10. սույն կանոնադրությամբ նախատեսված տնտեսական գործունեություն ծավալելու նպատակով պայմանագրային հարաբերություններ հաստատելու մասին որոշման ընդունումը, եթե այդ գործարքի գինը գերազանցում է քսան միլիոն ՀՀ դրամը.
- 6.11.11. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների եւ հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.
- 6.11.12. Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.
- 6.11.13. Սույն կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ Կառավարչի (Տնօրենի) հաշվետվությունների լսումը.
- 6.11.14. իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.
- 6.11.15. Հիմնադրամի հաշվետվությունների վերստուգման համար անկախ աուդիտոր ընտրելու նպատակով անցկացվող մրցույթի արդյունքների հաստատումը և աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.
- 6.11.16. Կառավարչի (Տնօրենի) ներկայացմամբ Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը.
- 6.11.17. Հիմնադրամի Կառավարչին (Տնօրենին) չվերապահված այլ լիազորությունների իրականացումը.
- 6.11.18. ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավասությունների իրականացումը:

- 6.12. Հոգաբարձուների Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

- 6.13. Հոգաբարձուների Խորհրդի ցանկացած անդամ իրավունք ունի ծանոթանալու Հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

- 6.14. Հոգաբարձուների Խորհուրդը ղեկավարում է Խորհրդի նախագահը, որն ընտրվում է Խորհրդի կողմից, նրա կազմից, Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհրդի նախագահը՝
 - 6.14.1. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
 - 6.14.2. որոշում և հաստատում է Խորհրդի նիստի օրակարգը,
 - 6.14.3. հրավիրում է Խորհրդի նիստեր՝ իր սեփական նախաձեռնությամբ, Խորհրդի ցանկացած անդամի կամ Կառավարչի (Տնօրենի) առաջարկությամբ,

- 6.14.4. նախագահում է Խորհրդի նիստերը և ստորագրում նիստերի արձանագրությունները,
- 6.14.5. վերահսկում է Խորհրդի նիստերում ընդունված որոշումների կատարումը,
- 6.14.6. ստորագրում է Խորհրդի որոշումները:
- 6.15. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհրդի նիստերը գումարվում են պարբերաբար՝ առնվազն տարին երկու անգամ: Խորհրդի նիստերը հրավիրվում են Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, Խորհրդի ցանկացած անդամի կամ Կառավարչի (Տնօրենի) առաջարկությամբ: Առանձին դեպքերում Խորհրդի որոշումներն ընդունվում են հարցման միջոցով:
- 6.16. Խորհուրդն իրավասու է որոշումներ ընդունել, եթե նիստին մասնակցում է Խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված այն դեպքերի, երբ որոշումների ընդունման համար սահմանված է ձայների ավելի մեծ համամասնություն: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Խորհրդի տարիքով ավագ անդամը: Եթե Խորհրդի նիստում քննարկվում է Հիմնադրամի Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր եւ քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:
- 6.17. Խորհրդի, Պատվավոր դիվանի, ինչպես նաև Խորհրդատվական կոմիտեի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն երկու օրինակով, որը ստորագրում են տվյալ նիստին մասնակցող բոլոր անդամները: Նիստը նախագահողը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար: Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստում ընդունած որոշումները: Արձանագրության մեջ նաև նշվում են՝
- 6.17.1. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
- 6.17.2. նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց քանակը
- 6.17.3. նիստին մասնակցած անձանց քանակը
- 6.17.4. նիստի օրակարգը:
- 6.18. Հիմնադրամի գործադիր մարմինը Կառավարիչն (Տնօրենն) է, որի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ՝ Հոգաբարձուների Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի: Կառավարիչը (Տնօրենը) կազմակերպում է Հոգաբարձուների Խորհրդի որոշումների կատարումը: Կառավարչին (Տնօրենին) ընտրում և ազատում է Հոգաբարձուների Խորհուրդը: Տնօրենի պաշտոնում առաջին անգամ նշանակում կատարվել է Հիմնադրամի հիմնադիրների որոշմամբ: Հոգաբարձուների Խորհրդի որոշմամբ գործադիր մարմնի լիազորությունները պայմանագրով կարող են տրվել առևտրային կազմակերպության (Կառավարչի):
- 6.19. Կառավարչի (Տնօրենի) իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է Հոգաբարձուների Խորհրդի նախագահը կամ Հոգաբարձուների Խորհրդի կողմից լիազորված այլ անձ: Այն դեպքում, երբ գործադիր մարմնի գործառույթներն իրականացնում է առևտրային կազմակերպությունը, ապա վերջինս իր աշխատակազմի միջոցով է իրականացնում Հիմնադրամի կառավարումը,

իսկ Հիմնադրամն աշխատողներ չի ունենում: Կառավարիչը Հիմնադրամի կառավարման հետ կապված գործարքները կնքում է Հիմնադրամի անունից և նրա հաշվին: Կառավարչի հետ կնքվող Հիմնադրամի կառավարման պայմանագրում սահմանվում են Կառավարչի վաճառորդության չափը, այդ թվում՝ պարզևավճարների կամ հավելվածարների ձևով որոշվող խրախուսավճարները կամ դրանց հաշվարկման կարգը:

- 6.20. Կառավարիչը (Տնօրենը)
 - 6.20.1. տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից.
 - 6.20.2. ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
 - 6.20.3. գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագրեր.
 - 6.20.4. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.
 - 6.20.5. Հոգաբարձուների Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
 - 6.20.6. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
 - 6.20.7. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնադրամի աշխատակիցներին, աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
 - 6.20.8. իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և Խորհրդի կողմից Կառավարչին (Տնօրենին) վերապահված այլ լիազորություններ:
- 6.21. Տնօրենը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Հոգաբարձուների Խորհրդի համաձայնությամբ:
- 6.22. Հոգաբարձուների Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Կառավարչի (Տնօրենի) հետ կնքված պայմանագիրը՝ Օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով: Տնօրենի բացակայության դեպքում նրա պարտականությունները ժամանակավորապես կատարում է տնօրենի տեղակալը կամ դրա անհնարինության դեպքում Խորհրդի նախագահը:
- 6.23. Կառավարիչն (Տնօրենն) իր գործունեության համար, յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո 80 օրվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին, որի կողմից հաշվետվությունը հավանության չարժանացնելը հիմք է Կառավարչի (Տնօրենի) հետ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու համար:

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻ, ՏԱՐԵՎԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- 7.1. Հիմնադրամի ֆինանսական տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի առաջին օրը և վերջանում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի վերջին օրը, բացառությամբ առաջին ֆինանսական տարվա, որը սկսվում է Հիմնադրամի գործունեության առաջին օրը: Հիմնադրամն ընթացիկ հաշվապահական հաշվառում է վարում ՀՀ գործող օրենսդրությանը և հաշվապահական ստանդարտներին համապատասխան:
- 7.2. Հիմնադրամը, մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ը, հրապարակում է տարեկան հաշվետվություն իր գործունեության մասին: Հաշվետվության բովանդակությունը պետք է համապատասխանի Օրենքի պահանջներին:

8. ՀԻՄՆԱՊՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 8.1. Հիմնադրամի գործունեության դադարումը կարող է իրականացվել նրա լուծարման կամ միացման և միաձուլման ձևով վերակազմակերպման արդյունքում:
- 8.2. Հիմնադրամը կարող է միացվել կամ միաձուլվել միայն հիմնադրամի (հիմնադրամների) հետ: Հիմնադրամի վերակազմակերպումն իրականացվում է Հիմնադրամի հիմնադիրների միաձայն որոշմամբ կամ Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի անդամների ձայների 2/3-ով:
- 8.3. Հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելու իրավունք ունի միայն դատարանը՝ ցանկացած շահագրգիռ անձի դիմումի համաձայն: Հիմնադրամի անունից դիմում ներկայացնելու որոշումը ընդունում է Խորհուրդը՝ նրա անդամների ձայների 2/3-ով: Հիմնադրամը կարող է լուծարվել Օրենքով նախատեսված հիմքերով:
- 8.4. Հիմնադրամի լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին՝ ներառյալ անհատույց փոխանցվում են գիտական և/կամ կրթական կազմակերպություններին, և/կամ գիտական աստիճան և/կամ պաշտոն ունեցող ֆիզիկական այն անձանց, ովքեր հանդիսանում են Հիմնադրամի հնարավոր շահառուներ: Եթե Հիմնադրամը չունի սույն կետում նշված հնարավոր շահառուներ, ապա Հիմնադրամի լուծարման արդյունքում մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

9. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 9.1. Սույն կանոնադրության մեջ ցանկացած փոփոխություն և/կամ լրացում, ինչպես նաև նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատում իրականացնելու իրավասությունը պատկանում է Հիմնադրամի հիմնադիրներին՝ վերջիններիս միաձայն որոշմամբ կամ Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդին՝ վերջինիս անդամների ընդհանուր թվի ձայների 2/3-ով ընդունվող որոշմամբ:
- 9.2. Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարնում գրանցման պահից: